## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 36. Ծանուցման եղանակները**

1. Տարածքային մարմինը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում և կարգով պատշաճ ծանուցել պրոբացիայի շահառուին:

2. Պրոբացիայի շահառուի ծանուցումը կատարվում է՝

1) թղթային կամ էլեկտրոնային ծանուցագրով.

2) ծանուցվողի գրավոր համաձայնությամբ՝ ցանկացած այլ եղանակով.

3) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. Եթե առկա են հավաստի տվյալներ, որ պրոբացիայի շահառուն ֆիզիկապես անկարող է կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող ներկայանալ տարածքային մարմին, ապա պրոբացիայի ծառայողն անձամբ այցելում է պրոբացիայի շահառուին կամ ապահովում է նրա՝ տարածքային մարմին ներկայանալը: